ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 դեկտեմբերի 2022 թվականի N 2089 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի N 332-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 22-ի «Երևան քաղաքի 33-րդ թաղամասի նկատմամբ բացառիկ՝ զերակա հանրային շահ ճանաչելու մասին» N 332-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությունում «16» թիվը փոխարինել «16.1» թվով.

2) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետում «2023 թվականի հունվարի 1» բառերը փոխարինել «2023 թվականի ապրիլի 16» բառերով.

3) որոշման N 1 հավելվածի 15-րդ կետում «հավելված N 16» բառերը փոխարինել «հավելված N 16.1» բառերով.

4) ուժը կորցրած ճանաչել որոշման N 16 հավելվածը.

5) որոշումը լրացնել նոր՝ N 16.1 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Լիազորել Երևանի քաղաքապետին «Սիթի Սենթր Դիվելըփմենթ» փակ բաժնետիրական ընկերության, «Էրզրում Քոնսթրաքշն», «Ուրմիա Քոնսթրաքշն» և «Ջի Էմ Դեվելոփեր», «Տրապիզոն Քոնսթրաքշն» և «Ջի Էմ Դեվելոփեր», «Ակն Քոնսթրաքշն», «Մանազկերտ Քոնսթրաքշն», «Սասուն Քոնսթրաքշն», «Ձեյթուն Քոնսթրաքշն», «Բաբերդ Քոնսթրաքշն» և «Տարսոն Քոնսթրաքշն», «Կարս Քոնսթրաքշն», «Արդահան Քոնսթրաքշն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների հետ 2018 թվականի մարտի 19-ին կնքված պայմանագրերում կատարել սույն որոշումից բխող փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

29.12.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ